ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արբաթ գյուղի 4-րդ փողոց 48 շենք հասցեում, պատմության (6 դասաժամ) , քիմիայի (12 դասաժամ), կենսաբանության (14 դասաժամ) , ինֆորմատիկայի (8 դասաժամ) , ֆիզկուլտուրայի (10 դասաժամ) տեխնոլոգիայի (4 դասաժամ) և ռուսաց լեզվի (19 դասաժամ), դասվարի (15 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Χ4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4),Հանրակրթության մասինե ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատու է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 14^{00}-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա՝ հոկտեմբերի 25-ին, ժամը 14^{00}-ին, Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն ՝ Արարատի մարզի Արբաթ գյուղի 4-րդ փողոց 48 շենք :

Տեղեկությունների համար զանգահարել 098-47-24-20: